ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին եռամսյակ իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<< Զանգեզուր'' Կենսոլորտային Համալիր'' ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Դարգաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ				**0.0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		**33904.8**	**33904.8**	**0.0**	
1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝		**33904.8**	**33904.8**	**0.0**	
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0.0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		33904.8	33904.8	0.0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0.0**	
3. Այլ եկամուտներ, որից՝		**0.0**	**0.0**	**0.0**	
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0.0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0.0	
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		**0.0**	**0.0**	**0.0**	
- ծառայությունների մատուցումից				0.0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0.0	
- այլ եկամուտներ				0.0	

1	2	3	4	5=3-4	6
Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող Ա+տող Բ)	x	33904.8	33904.8	0.0	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	x	33904.8	39590.6	(5685.8)	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	29537.0	32495.4	(2958.4)	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	x	29537.0	32495.4	(2958.4)	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	29537.0	32495.4	(2958.4)	
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0.0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	x	600.0	554.0	46.0	
Դ2.1. Շարունակական ծախսեր		300.0	272.0	28.0	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0.0	
-Էներգետիկ ծառայություններ	4212	0.0	0.0	0.0	
-Կոմունալ ծառայություններ	4213	0.0	0.0	0.0	
-Կապի ծառայություններ	4214	0.0	0.0	0.0	
-Ապահովագրական ծախսեր	4215	300.0	272.0	28.0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216			0.0	
-Այլ ծախսեր	4217			0.0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	300.0	282.0	18.0	
-Ներքին գործուղումներ	4221	300.0	282.0	18.0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0.0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0.0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	x	0.0	0.0	0.0	
-Վարչական ծառայություններ	4231			0.0	
-Համակարգչային ծառայություններ	4232	0.0		0.0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0.0	
-Տեղակատվական ծառայություններ	4234			0.0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0.0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0.0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237			0.0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.0	0.0	0.0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	0.0	0.0	0.0	
-Մասնագիտական ծառայություններ	4241				
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x	0.0	0.0	0.0	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0.0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	0.0	0.0	0.0	

1	2	3	4	5=3-4	6
Դ2.6. Նյութեր	x	0.0	0.0	0.0	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261			0.0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262			0.0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0.0	
-Տրանսպորտային նյութեր	4264			0.0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0.0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0.0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267			0.0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0.0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	3767.8	6541.2	(2773.4)	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	x			0.0	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	x	3767.8	6541.2	(2773.4)	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե այդ թվում		3767.8	6541.2	(2773.4)	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	*3767.8*	*6541.2*	*(2773.4)*	
ԱԱՀ	x	3767.8	6541.2	(2773.4)	
Շահութահարկ	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	*0.0*	*0.0*	*0.0*	
Նշել ըստ տեսակների		0.0	0.0	0.0	
Նշել ըստ տեսակների				0.0	
Նշել ըստ տեսակների				0.0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0.0	0.0	0.0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	*0.0*	*0.0*	*0.0*	
Գույքահարկ	x		0.0	0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	*0.0*	*0.0*	*0.0*	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	x	0.0	0.0	0.0	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831			0.0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	4861	0.0	0.0	0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	

1	2	3	4	5=3-4	6
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող Գ -տող Դ)		0.0	(5685.8)	5685.8	
Զ. ՁՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		0.0	0.0	0.0	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	0.0	0.0	0.0	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0.0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0.0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0.0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0.0	
-Վարչական սարքավորումներ	5122			0.0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0.0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0.0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0.0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0.0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0.0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Հող	5411			0.0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0.0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0.0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0.0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	x			0.0	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	0.0	(5685.8)	5685.8	

Տնօրենի ժ/պ _____ Արման Մկրտչյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Սառա Մարգարյան
(ստորագրություն)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է պահպանության աշխատանքներ 79038,70հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137.075հա
  «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա
  «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.7հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա
  «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,13հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնության ժառանգության պահպանություն, հակահրդեհային միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում և պահպանման գոտիներում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: Մարդու գործունեության հետևանքով արգելոցի, ազգային պարկի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում (79038.7 հա):

- Պահպանության աշխատանքներն իրականացրել են մասնաճյուղերը՝ արագ արձագանքման խմբի ղեկավարությամբ, ՊՈԱԿ-ի 2021թ. աշխատանքային ծրագրի համաձայն:
- 2020 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2021 թվականի հունվարի 7-ն ընկած ժամանակահատվածում պահպահության աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով, սահմանված գրաֆիկով ուժեղացվել է հսկողությունը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊ տարածքներում:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում մեկնարկվել է «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի կառավարման պլանների մշակման աշխատանքները, որն իրականացվում է «Գեոինֆո» ՍՊԸ-ի համապատասխան թիմի կողմից: 2021 թվականի հունվարի 29-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում «Գեոինֆո» ՍՊԸ-ի, «Պահպանվող

տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի ներկայացուցիչների և «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև:

- 2021 թվականի փետրվարի 14-ի գիշերը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները հերթական շրջայցի ժամանակ, նկատել են կասկածելի մեքենա, որը շրջում էր ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Գեղի գյուղի տարածքում: Մեքենայում գտնվող անձինք ներկայացել են, որպես ՀՀ ոստիկանության աշխատակիցներ՝ չներկայացնելով համապատասխան փաստաթղթեր: Դեպքի մասին տեղեկացվել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն:
- 2021 թվականի փետրվարի 16-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի աշխատակիցները հերթական շրջայցի ընթացքում՝ «Արևիք» ազգային պարկի Մեղրի-Կապան ավտոմայրուղու 18-րդ կմ-ի վրա, ճանապարհից դեպի աջ Մեղրի գետի աջ և ձախ ափերին հայտնաբերել են ապօրինի հատված 14 հատ ծառերի կոճղեր, որի մասին տեղեկացվել է ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն (արձանագրությունը կցվում է): ՀՀ Սյունիքի մարզային քննչական վարչության 16.03.2021 թվականի գրության բուսական աշխարհին պատճառվել է 953.750 ՀՀ դրամի վնաս: Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնում նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար, ուղարկվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն: Քրեական գործի նախաքննության ընթացքում որոշում է կայացվել «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին տուժող ճանաչելու մասին:
- 2021 թվականի փետրվարի 20-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները՝ հերթական շրջայցի ժամանակ, նկատել են կասկածելի մեքենա, որը շրջում էր ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Ներքին Գիրաթաղ գյուղի տարածքում: Շարունակելով ուժեղացված հսկողությունը՝ փետրվարի 21-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հավաքագրված տեղեկատվությունը սահմանված կարգով փոխանցվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին և ՀՀ ոստիկանությանը:
- 2021 թվականի մարտի 16-ին ժամը 10:30-11:00-ի սահմաններում «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի արագ արձագանքման տեսուչները հերթական բնապահպանական շրջայցի ժամանակ, «Զանգեզուր» մասնաճյուղի հարակից «Քիրս» կոչվող տարածքում հայտնաբերել են սատկած վայրի խոզ, որը հավանական է՝ հրազենային վնասվածքից էր սատկել: Դեպքի առթիվ տեղեկացվել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժին: ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի պետից ստացված 26.03.2021 թվականի գրությամբ պարզվել է, որ կենդանու կաշվի և մարմնի վրա հրազենային անցքեր չկան, կենդանու մարմնում փամփուշտ չկա, իսկ կենդանին էլ սատկել է հիվանդության պատճառով:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

- 2021 թվականի մարտի 21-ին ժամը 11:30-ի սահմաններում Շիկահող արգելոցի հարակից տարածքում՝ Ծավ գյուղի 29-րդ կմ-ի հատվածում, ճանապարհի վերին մասում

հրդեհ է բռնկվել: ՊՈԱԿ-ի աշխատակիցներից 9 հոգի մասնակցել են հրդեհաշիջման աշխատանքներին: Այրվել է մոտ 1հա խոտածածկ տարածք:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը:

• 2021 թվականի 1-ին եռամսյանկի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հարակից համայնքների ղեկավարների հետ ՀՀ-ում և Սյունիքի մարզում տիրող դրության, ինչպես նաև համագործակցության, ազգաբնակչության հետ հակասությունները մեղմելուն ուղղված թեմաներով 18 անգամ անց են կացվել քննարկում-զրույցներ:

1.4 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնանային – II եռամսյակ, աշնանային – III – IV եռամսյակ) (ստուգում):

• 1-ին եռամսյակում հերթական վերստուգիչ ստուգումներ չեն իրականացվել:

1.5. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

• Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, փորձում ենք ապահովել պահպանվող տարածքների կենսաբազմազանությունը և բնականոն կայուն զարգացումը:

2. Գիտական միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ),

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

• Հունվար ամսում խոշոր կաթնասունների (եվրոպական այծյամ, վայրի խոզ, եվրոպական լուսան, գորշ արջ, գայլ, աղվես) մոտ տեղի ունեցող փոփոխություններն ու նրանց տեղաշարժերն ուսումնասիրելու նպատակով՝ իրականացվել են ստուգայցեր «Զանգեզուր» պետական արգելավայր և «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղեր: Ստուգայցերի ընթացքում «Զանգեզուր» պետական արգելավայր մասնաճյուղում իրականացվել են ֆոտոբռնիչ սարքավորումների տեղադրում և այլ հատվածներում անտառային և լեռնային գոտիներում արահետների ուսումնասիրություն՝ հետագայում ֆոտոխցիկների տեղադրման նպատակով: Ինչպես նաև իրականացվել են 2021 թվականից «Շիկահող» պետական արգելոց և «Զանգեզուր» պետական արգելավայր

մասնաճյուղերի տարածքում տեղադրված ֆոտոբռնիչ սարքավորումների հիշողության քարտերի, մարտկոցների ստուգում և տեղադրում:

- 2021 թվականի փետրվար ամսում ԲՀՀ- Հայաստան (WWF) մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել են խոշոր կաթնասունների ուսումնասիրություններ (Բեզոարյան այծ, հայկական մուֆլոն, Կովկասյան գորշ արջ, Գայլ, Կովկասյան ընձառյուծ, Եվրոպական այծյամ և այլն) և ֆոտոբռնիչ սարքավորումների տեղադրում «Զանգեզուր» պետական արգելավայր մասնաճյուղի տարածքում:
- 2021 թվականի մարտին իրականացվել են «Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի բարձրալեռնային հատվածներում հանդիպող կաթնասունների /Բեզոարյան այծ, Գորշ արջ, Հայկական մուֆլոն.../ ուսումնասիրություններ՝ եղանակային պայմանների ազդեցությունից նրանց մոտ կատարվող փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով: Իրականացվել է նաև «Շիկահող» պետական արգելոց և «Զանգեզուր» պետական արգելավայր մասնաճյուղերում տեղադրված ֆոտոբռնիչ սարքավորումների մարտկոցների և հիշողության քարտերի ստուգում, փոխարինում:
- Կատարվել են «Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում հանդիպող՝ գարնանային վերադարձ կատարած, բնադրվող, չվող թռչնատեսակների առկայության ուսումնասիրություններ, ինչի արդյունքում գարնանային վերադարձ է գրանցվել հետևյալ տեսակների մոտ՝ Գարնանային գեղգեղիկ, Ծնկլտան գեղգեղիկ, Անապատային մորեհավ, Սովորական կարմրատուտ և Սպիտակ Խաղտտնիկ:

2.2 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ իրականացում՝ մասնավորապես հազվագյուտ և անհետացող տեսակների վերաբերյալ:

- Հունվար-մարտ ընկած ժամանակահատվածում ուսումնասիրությունների ընթացքում հիվանդություններ և անկման դեպքեր չեն արձանագրվել:

3. Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

3.1 ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում վերականգնում և արդիականացում:

- Հաշվի առնելով տարածաշրջանի պատերազմական իրավիճակի հետևանքները ԲՀՊ տարածքներում երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն չի իրականացվել:

3.2 «Էյար թրեյլս» ՍՊ-ի հետ համագործակցություն, առկա երթուղիների համատեղ համալրում մեդիա բովանդակությամբ. լրացված իրականությամբ նոր արահետների մշակում:

- 1-ին եռամսյակում հանդիպումներ չեն իրականացվել:

Գիտության և զբոսաշրջության բաժինն իրականացրել է նաև հետևյալ աշխատանքներն ու հանդիպումները

- 2021 թվականի փետրվարի 1-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները մասնակցել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը, որի հիմնական նպատակն էր քննարկել ՊՈԱԿ-ների զբոսաշրջային արահետների ներկա

վիճակը, ռազմական գործողությունների արդյունքում առաջացած զբոսաշրջային խնդիրները և հետագա անելիքները: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և նախարարության ենթակայության տակ գործող ՊՈԱԿ-ների աշխատակիցները:

- 2021 թվականի փետրվարի 12-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի զբոսաշրջության ավագ մասնագետ- հանրության հետ կապերի պատասխանատուն մասնակցել է «Արկ» բնապահպանական ՀԿ-ի գրասենյակում կազմակերպված հանդիպմանը՝ Կապան համայնքում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցում էին Ամերիկյան համալսարանի շարունակական կրթության բաժնի ղեկավարը և զբոսաշրջության զարգացման համակարգողը, «Արկ» բնապահպանական ՀԿ-ի անդամները:
- 2021 թվականի փետրվարի 18-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի զբոսաշրջության ավագ մասնագետ-հանրության հետ կապերի պատասխանատուն մասնակցել է՝ «Էկոզբոսաշրջության գիդեր-էքսկուրսավարներ ԲՀՊՏ-ներում աշխատանքի կազմակերպման և աշխատակիցների վերապատրաստման հմտությունները» առցանց վեբինարին: Վեբինարի ընթացքում միջազգային գործընկերների կողմից ներկայացվել են Ավստրիայի և Չեխիայի ԲՀՊՏ-ների զբոսաշրջային ներուժը և զբոսաշրջության կազմակերպման փորձը: Հանդիպմանը մասնակցում էին մոտ 10 երկրների բնապահպանության և զբոսաշրջության ոլորտի մասնագետներ:
- 2021 թվականի մարտի 4-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի զբոսաշրջության ավագ մասնագետ-հանրության հետ կապերի պատասխանատուն մասնակցել է՝ «Էկոզբոսաշրջության զարգացման լավագույն օրինակները» առցանց վեբինարների շարքի առաջին վեբինարին, որի թեման էր «Էկոզբոսաշրջային կլաստերի հիմնման լավագույն փորձերը: «Արկտիչեսկիյ» զբոսաշրջային կլաստերի հիմնման փորձը»: Վեբինարի ընթացքում միջազգային գործընկերների կողմից ներկայացվել է զբոսաշրջային կլաստերների հիմնման լավագույն օրինակները՝ Ֆրանսիայի, Նորվեգիայի, Գերմանիայի, Ֆինլանդիայի և Կանադայի ԲՀՊՏ-ներում: Մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել Ռուսաստանի «Արկտիչեսկիյ» զբոսաշրջային կլաստերի ստեղծման մասին:
- 2021 թվականի մարտի 10-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝ տիկին Ա. Մազմանյանի կողմից՝ ԲՀՊՏ-ների կառավարումն ու պահպանությունն իրականացնող ՊՈԱԿ-ների հետ՝ առցանց ձևաչափով անցկացված աշխատանքային խորհրդակցությանը՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ից մասնակցել են գիտության և զբոսաշրջության բաժնի պետ-կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ՝ Հ. Աղաթելյանը և զբոսաշրջության ավագ մասնագետ-հանրության հետ կապերի պատասխանատու՝ Մ. Պետրոսյանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել

են ՊՈԱԿ-ների կողմից էկոկրթության իրականացման գործընթացները, ՊՈԱԿ-ների պատշաճ ներկայացվածությունը սոցիալական ցանցերում, ինչպես նաև զբոսաշրջային սեզոնի բացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները:

- 2021 թվականի մարտի 11-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի զբոսաշրջության ավագ մասնագետ- հանրության հետ կապերի պատասխանատուն մասնակցել է՝ «Էկոզբոսաշրջային կլաստերի հիմնման լավագույն օրինակները. Թաթարստանի փորձը» թեմայով առցանց վեբինարին: Միջազգային գործընկերների կողմից ներկայացվեց Թաթարստանի զբոսաշրջային կլաստերների հիմնման գործընթացները և զարգացման հեռանկարները:
- 2021 թվականի մարտի 18-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և զբոսաշրջության մասնագետը մասնակցել է՝ «Զբոսաշրջային կլաստերի զարգացման մոդելը. Բաշկորտոստանի հանրապետության «Բաշկիրիայի սիրտը» զբոսաշրջային կլաստերի օրնակով» առցանց վեբինարին: Միջազգային գործընկերների կողմից ներկայացվեց «Բաշկիրիայի սիրտը» զբոսաշրջային կլաստերի զարգացման հեռանկարները:
- Պարբերաբար թարմացվել է ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Տեղադրվել են նոր լուսանկարներ և տեսանյութեր ԲՀՊ տարածքներից:

4. «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում

4.1 Արևելյան սոսու և հունական ընկուզենու բնական վերաճը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական միջոցառումների իրականացում.

- «Սոսու պուրակ» պետական արգելավայրում գտնվող տնկարանում իրականացվել են գարնանային նախապատրաստական աշխատանքներ:

4.2 Արգելավայրի ներտարածքային ճանապարհների բարեկարգում.

- Արևելյան սոսու և հունական ընկուզենու բնական վերաճը ապահովելու նպատակով իրականացվել են ցանկապատերի և ճանապարհների բարեկարգում: «Սոսու պուրակ» պետական արգելավայրում գտնվող տնկարանից վաճառվել է 470 տնկի:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրեն Ա. Մկրտչյան

Արձանագրություն N 1

16.02.2021թ.

«Արևիկ»
ավագանի որոշում
5/6

Հիմք ընդունելով գյուղապետարանի նախաձեռնությամբ «Տանձակերտ» համայնքային հասցեագրման ՊՄԿԿ-ի «Արևիկ» ավագանի որոշում 5/6-ի գլխավոր մասնագետ Ս. «Բաղդասար» սեփ. գրադարանի գլխավոր մասնագետ Հասմիկ Գևորգյանի կազմակերպությամբ անցկացվեցին հասցեագրման գործընթաց հետևյալ հասցեներով հանդիսացող գույքերի նկատմամբ

Ս/թ. փետրվարի 16-ին գյուղապետարանում գրանցվեցին հետևյալ հասցեներ՝ Ղազարյան ավագանեցուց 18-ը մեկ 65-ի դիմում, ինքնակամությամբ զբաղեցրած այգի հողամասի գրանցման հայցադիմումներ ավագանի հասցեագրման գործընթաց հանձնաժողովի 14 հարց հարցեր կտրվեցին:

Ներքևում բերված հարցերը բոլոր գյուղացիներն և գրանցվածներ.

1. Գոռ - 30ամ
2. Գոռ - 8ամ
3. Կարեն - 22ամ
4. Գոռ - 20ամ
5. Գոռ - 12ամ
6. Ռոմանոս - 78ամ
7. Ռոմանոս - 60ամ
8. Կարեն - 52ամ
9. Ռոմանոս - 26ամ
10. Բորիս - 28ամ
11. Ռոմանոս - 30ամ
12. Ռոմանոս - 28ամ
13. Ռոմանոս - 28ամ ամուսին
14. Ռոմանոս - 28ամ

Հարցերին հարցված հարցերի հիման վրա հանձնաժողովը հանձնարարեց գրանցողներին գրանցել, գրանցված տեղերը հետևյալ հասցեներն են հարցերի հիման վրա:

Տարածքի կոորդինատները են
N 39° 00.37 N 39° 00.36
E 46° 12.29 և E 46° 12.27

Umsetzung aufgrund begründeter Anträge
ausgeschlossen wird:

Stimmen [illegible] Ablehnungen

Stimmen [illegible] Enthaltungen

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

3304 ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան Երկաթուղայինների փ. 4, հեռ. 060-65-14-02, ֆաքս 0285 2-53-59

57-55/գ-21
16.03.2021թ

<<Զանգեզուր կենսոլորտային համալիր>>
ՊՈԱԿ տնօրեն Ա. Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան.

Վանիկ Ժորայի Գալստյանը Մեղրի Երևան ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրի հատվածում, <<Զանգեզուր կենսորոլրտային համալիր>> ՊՈԱԿ <<Արևիք>> ազգային պարկ մասնաճյուղի տարածքում, Մեղրի գետի աջ և ձախ ափերից ապօրինի հատել է թվով 14 հատ տարբեր տեսակի ծառեր ինչի արդյունքում բուսական աշխարհին պատճառվել է առանձնապես խոշոր չափերով 953.750 ՀՀ դրամի վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնում նախապատրաստված նյութերով 13.03.2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 45150521 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար, ուղարկվել ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում որոշում է կայացվել <<Զանգեզուր կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ին տուժող ճանաչելու մասին:

Խնդրում եմ հայտնել կազմակերպության կողմից ով է լիազորվում նախաքննության ընթացքում հանդես գալու որպես տուժողի ներկայացուցիչ:

ՀԿԳ քննիչ Մ. Մինասյան

Գրգ 75
19.03.2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2021թ. I եռամսյակի պետական բյուջեի

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման

Հ/Հ	Իրականացված միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Կատարման ժամկետը	Ծախսված գումարը (դրամ)
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, հակահրդեհային միջոցառումների իրականացում	1. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-տարածքներում և պահպանման գոտիներում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: Մարդու գործունեության հետևանքով արգելոցի, ազգային պարկի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում (79038.7 հա): 2. Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում: 3. Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը 4. ՊՈԱԿ-ի	1. Պահպանության միջոցառումներ՝ աշխատակիցների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում ստուգումների և հերթապահությունների միջոցով: 2. Բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն 3. Հրդեհների կանխարգելում: 4. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում բնապահպանական նորմերի և կանոնների կատարումն ապահովելու, որսագողության, ապօրինի ծառահատումները և հրդեհի դեպքերը կանխարգելելու նպատակով ստուգայցերի, ամենօրյա հերթապահությունների և շուրջկալների	1. Ընդհանուր միջոցառումներ, պատշաճ հսկողություն, սիստեմատիկ ստուգայցեր, շրջկալներ և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացվել են հանդիպումներ: 2. Հրդեհների կանխարգելում/ ՊՈԱԿ-ի աշխատակիցներից 9 հոգի մասնակցել են Շիկահող արգելոցի հարակից տարածքի հրդեհաշիջման աշխատանքներին: 3. «Արևիք» մասնաճյուղի աշխատակիցների կողմից արձանագրվել է ծառահատման 1 դեպք և կազմվել է արձանագրություն: 4. 1-ին եռամսյակում	01.01.2021 31.03.2021	31672480

		տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնանային – II եռամսյակ, աշնանային – III – IV եռամսյակ) (ստուգում): 5. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:	իրականացում՝ խախտումների տեսակետից առավել վտանգավոր գոտիներում: 5. Ստուգումներ, հաշվետվություններ, վերլուծություններ և քննարկումներ:	հերթական վերստուգիչ ստուգումներ չեն իրականացվել 5. Ընդհանուր միջոցառումներ ի, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչութ յան հետ իրականացված հանդիպումներ ի շնորհիվ, փորձում ենք ապահովել պահպանվող տարածքների կենսաբազմազ անությունը և բնականոն կայուն զարգացումը:		
2	Գիտական միջոցառումներ	1. Գիտահետազոտական միջոցառումների իրականացում: ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում, բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ), գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների	1. Հավաստի տվյալների ձեռքբերում, դիտարկումների, դաշտային ուսումնասիրություններ ի իրականացում: 2. Պետական արգելոցի և ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊՏ տարածքներում հազվագյուտ և արժեքավոր բուսական և կենդանական տեսակների տարածվածության և կենսաբանական առանձնահատկություն ների ուսումնասիրություններ , տվյալների ձեռք բերում, հաշվառման աշխատանքներ և մոնիթորինգի իրականացում (ամփոփ	1. Նոր տեսակային կազմի համալրմանն ուղղված շարունակվել են համապատասխ ան ուսումնասիրութ յունները: 2. Կատարվել են գիտական նյութերի ամփոփման և ցուցակների լրամշակմանն ուղղված, ինչպես նաև գիտահետազո տական և գիտաճանաչող ական նյութերի նախապատրաս տման աշխատանքներ	01.01.2021 31.03.2021	1979530

		ուսումնասիրություններ: 2. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ իրականացում՝ մասնավորապես հազվագյուտ և անհետացող տեսակների վերաբերյալ:	հաշվետվության կազմում)			
	3. Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ	1. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում վերականգնում և արդիականացում: 2. «Էյար թրեյլս» ՍՊ-ի հետ համագործակցություն, առկա երթուղիների համատեղ համալրում մեդիա բովանդակությամբ. լրացված իրականությամբ նոր արահետների մշակում:	Համագործակցություն Տրանսկովկասյան ՀԿ-ի հետ՝ «Արևիք» ազգային պարկում նոր արահետների մշակման և ստեղծման գործընթացում:	1. Հաշվի առնելով տարածաշրջանի պատերազմական իրավիճակի հետևանքները ԲՀՊ տարածքներում երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն չի իրականացվել: 2. 1-ին եռամսյակում հանդիպումներ չեն իրականացվել	01.0.2021 31.03.2021	3167240
	4. «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում	1. Արևելյան սոսու և հունական ընկուզենու բնական վերաճը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական միջոցառումների իրականացում. 2. Արգելավայրի ներտարածքային ճանապարհների բարեկարգում	Անտառտնտեսական միջոցառումների իրականացում	1.Իրականացվել են գարնանային նախապատրաստական աշխատանքներ: 2.Իրականացվել են ցանկապատերի և ճանապարհների բարեկարգում	01.01.2021 31.03.2021	2771350
ԸՆԴԱՄԵՆԸ						**39590600**

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրեն Ա. Մկրտչյան